

Արտատպված է՝ Ի. Ա. Բուհին, Վիպակներ և պատմվածքներ, Ե., «Սովետական գրող» հրատարակչություն, 1998:

ԱՆՆԱ ՍԱՅԱԿՅԱՆՑ

Ի. Ա. ԲՈՒՆԻՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՐՁԱԿԸ

Իվան Բուհինի մասին ժամանակակիցները միշտ իրարամերժ կարծիքներ են հայտնել: Ոմանց համար նա եղել է սառը, մեծամիտ, խորշող «աղա»: Ուրիշների համար՝ հմայիչ, մարդկային, սրամիտ, պարզ: Երկու կերպար, մեկը մյուսի հետ ոչ մի կապ չունեցող:

Եվ զարմանալի չէ: Ի բնե լինելով շատ ինքնամոկոփ, Բուհինը ամենքի մոտ չէ, որ բացվել է: Նրան լավ կարող էր ճանաչել միայն այն մարդը, ում Բուհինը այդ **թույլ էր տալիս**, և լինում էր դա կամ **ոչ՝** ուղղակիորեն առաջին հայացքից: Նրա կինը, Վերա Նիկոլանևան հիշում է, որ դեռ ջահել ժամանակից շատ շուտ էին բացահայտվում Իվան Ալեքսեևիչի ««բարեկամները» և «թշնամիները», այսինքն մարդիկ, որ սիրելի էին, և մարդիկ, ում, ըստ տեսակի, նա չէր հանդուրժում: Նրա այդ գիծը մնաց ամբողջ կյանքում, նույնիսկ անկախ այն բանից, թե տվյալ անձնավորությունը ինչպես էր նրան վերաբերվում: Սկսվում էր մարդու ֆիզիկական «մաշկային» անընդունելիությունից, և այնուհետև գրեթե միշտ այդ անընդունելիությունը տարածվում էր և նրա հոգեկան հատկությունների վրա»:

Իսկ մարդկանց նա հասկանում էր անսխալ կերպով, բնագրով, վայրկենապես:

Այդ գիծը խոսում էր Բուհին մարդու և գրողի խառնվածքի, և տաղանդի հիմնական հատկության մասին՝ կյանքի գերզգայուն զգացողություն ամեն ինչում: Չարմանալի ուժգին էր զգում նա «գոյության ուրախությունը այս ամենքիս համար էլ անըմբռնելի և սակայն սքանչելի երկրային աշխարհում»: «Ես ամեն ինչ զգում եմ ֆիզիկապես,— ասում էր նա արդեն ծեր հասակում:— ...Ես միշտ աշխարհն ընկալել եմ բույրերի, գույների, լույսի, քամու, գինու, ուտելիքի միջոցով, և այնքան սուր կերպով, տեր իմ, այնպիսի սրությամբ, նույնիսկ ցավ զգալու չափ...»: Չարմանալի խողովություն, տեսողություն, հոտառություն ուներ և, որ ամենակարևորն է, կարողանում էր այդ ամենի մեջ ուրախություն գտնել: Ոչ, միայն ուրախություն չէ, այլ այն տառապալից՝ և քաղցր, և տխուր, և պայծառ զգացողությունը գոյության, որով նա օժտված էր ուղղակիորեն ծնված օրվանից և որը նա դեռ վաղ հասակից փորձել է արտահայտել բանաստեղծությունների եւ օրագրային գրառումների ձևով: Դժբախտաբար, դրանցից քիչ բան է պահպանվել. ահա մի գրառում (հեղինակն ընդհամենը տասնվեց տարեկան է):

«Երեկո է: Դրսում, առանց դադար տալու, մոլեգնում է սաստիկ փոթորիկ: Հենց նոր դուրս եկա առմուտք: Սառը, ծակող քամին ձյուն է մտրակում երեսիդ: Ականակույր պտտվող մթության մեջ չէին երևում նույնիսկ տները: Հագիվիազ, ասես մշուշի մեջ, երևում էր ձյունածածկ այգին: Անտանելի ցուրտ էր:

Լամպը վառվում է սեղանին թույլ, մեղմ լույսով: Պատուհաններին սառցե սպիտակ նախշերը փայլվիլում էին գույնզգույն ճրագների նման: Լռություն է: Միայն բուքն է ոռնում և մեկ էլ մի երգ է մոմռում Մաշան (կրտսեր քույրը - Ա. Ս.): Ականջ ես դնում այդ ձայներին և տրվում ձմեռային երկար իրիկվա իշխանությանը: Ծուլանում ես շարժվել, ծուլանում ես մտածել:

Իսկ դրսում շարունակում է փոթորկել ձյունահողմը: Լուռ և միապաղաղ անցնում է ժամանակը: Լամպն առաջվա պես վառվում է թույլ լույսով: Եթե սենյակում կատարյալ լռություն է տիրում, լսվում է, ինչպես է թշնում նավթը: Երկար է ձմեռվա իրիկունը, տխուր: Ամբողջ գիշեր բուքը կմոլեգնի և լուսաբացին բարձր ձյունաթմբեր կկուտակի»:

«Ինձ համար բնությունը նույնքան կարևոր է, ինչպես մարդը,— ասում էր Բուկինը շատ ավելի ուշ:— Եթե ոչ ավելի կարևոր: Եվ միշտ է այդպես եղել: Ահա վերջերս կարդում էի իմ պատանեկան գրառումները: Չէ որ ես դրանք գրում էի միայն ինձ համար: Մտքովս էլ չէր անցնում ցույց տալ որևէ մեկին, նույնիսկ եղբորս, Յուլիին: Իսկ ինչքա՞ն նկարագրություններ կան այնտեղ՝ քամու, ամպերի, խոտի, անտառի, որքա՞ն հանդիպումներ կան այնտեղ բնության հետ: Բնության մասին ես գրել եմ շատ ավելի, քան մարդկանց մասին, որոնց հետ առնչվել եմ: Ես սիրում էի, ուղղակի սիրահարված էի բնությանը: Ուզում էի ձուլվել բնությանը, դառնալ երկինք, ժայռ, ծով, քամի: Տառապում էի, չէի կարողանում այդ արտահայտել բառերով: Դուրս էի գալիս առավոտյան սաստիկ հուզված ու գնում անտառ, ինչպես գնում են սիրային տեսակցության: Որքա՞ն բուռն էի սիրում ես կյանքը և կենդանի ամեն ինչ, խելահեղության աստիճանի: Պաստեռնակն իր բանաստեղծությունների ժողովածուն վերնագրել է «Քույր իմ, կյանք»: Բայց ինձ համար կյանքը եղել է ոչ միայն քույր, այլ քույր և մայր, և կին՝ հավերժական կանացիություն...»:

Բուկինը բանաստեղծ էր: Նա գրում էր հիանալի բանաստեղծություններ՝ պարզ, ներդաշնակ, դասական հստակ: Նա արդեն հայտնի բանաստեղծ էր այն ժամանակ, երբ որպես արձակագիր դեռ չէր հռչակվել: Իսկական Բուկինյան արձակը բանաստեղծություններից ուշ հանդես եկավ և բխեց այդ բանաստեղծություններից, ինչպես աղբյուրից: Եվ նրա ողջ կյանքի ընթացքում, նույնիսկ երբ արդեն գրեթե դադարել էր բանաստեղծություններ գրել, Բուկինի արձակը եղել է բանաստեղծի արձակ՝ խոսքի ռիթմի, կառուցվածքի, երաժշտականության միջոցով արտահայտված իր աշխարհագացողությամբ:

Բուկինյան այդ աշխարհագացողությունը, որ սկսել էր ձևավորվել շատ վաղ տարիքից, վերաբերմունքը մարդկանց, բնությանը, բուն կյանքին, մի խոսքով, նրա ողջ խառնվածքը պայմանավորված է կենսագրական երկու կարևոր հանգամանքներով:

Նախ և առաջ Վանյա Բուկինի բնավորության մեջ միաձուլվել են ծնողների գծերը, լրիվ հակադիր մեկը մյուսին: Նրա հայրը, Ալեքսեյ Նիկոլաևիչը, շատ բաց, լայնսիրտ մարդ էր, տաղանդավոր, արտիստական խառնվածքին հատուկ գծերով՝ անհոգ, հմայիչ իր շուտ բռնկվող և հեշտ հանդարտվող բնավորությամբ: «Յիշիր, տխրությունից մեծ դժբախտություն չկա»,— ասում էր նա որդուն: Ու նաև «Աշխարհում ամեն ինչ անցնում է, և արցունք թափել չարժե»: (Արդեն ծերության տարիներին Բուկինը հաճախ կրկնել է բառեր, որոնց մեջ կարելի է լսել հոր ասացվածքների արձագանքները. «Ոչ մի բան այնպես չի ծերացնում, ինչպես հոգսը»): Մանկացող և ի վերջո վերջին ունեցվածքն էլ վատնած «մանրակավածք» Ալեքսեյ Իվանովիչ Բուկինը մարմնավորում էր վերացող ռուս կավածատիրոջ, Ռուսաստանի անցյալի գիրկն անցնող ներկայացուցչի կերպարը: Բուկինի մայրը՝ Լյուդմիլա Ալեքսանդրովնան, ծննդյամբ Չուբարովա, նույնպես տիպական էր իր ժամանակի և միջավայրի համար: Նա մեղմ և թախծոտ կին էր՝ «տխուր բանաստեղծական հոգով» և սուր զգացողությամբ. նրան տառապեցնում էր շուրջը կատարվող ամեն ինչը, և դրա համար հիմքեր կային: Նա շատ էր սիրում պոեզիա և «ծոր տալով կարդում էր Պուշկինին, Ժուկովսկուն և մյուս բանաստեղծներին»: Իվան Ալեքսեևիչը ջերմորեն սիրում էր մորը և նրա մահից հետո շատ խոր թաղեց նրան իր

հիշողության մեջ ու մինչև կյանքի վերջն այլևս ոչ մեկի հետ բարձրաձայն չխոսեց նրա մասին:

Սուր և ուժգին ապրումների, խառնվածքի արտիստականության հետ մեկտեղ Բուհինի մեջ բնագոյային մի ետմղում կա տիաճ, այլանդակ, չար ամեն ինչից: Հասուն տարիներին այդ գիծը նրան կդրդի գրելու շատ ուժեղ ստեղծագործություններ ռուսական իրականության այլանդակությունների մասին. ծերության տարիներին, ընդհակառակն, նա ուղղակի տանել չի կարողանա որևէ խոսակցություն ծանր թեմաների շուրջ և կդադարի գրել դաժանության, աններդաշնակության, անմարդկայնության մասին, մահվան, կործանման մասին...

Բուհինը մեծացել է գավառական միայնության մեջ, և դա երկրորդ կենսագրական հանգամանքն էր, որ ազդեցություն ունեցավ նրա բնավորության ձևավորման վրա: Մանկությունը նա անց է կացրել Օռլովյան նահանգի աղքատացած կալվածքում: Ելեցի գիմնազիայում մի չորս տարի էլ չսովորած, նրան տուն են բերում: Տանը նրա կրթությամբ զբաղվում է ավագ եղբայր Յուլին. նա հատուկ ուշադրություն է դարձնում գրականությանը, լեզուներին և պատմությանը, իսկ ճշգրիտ գիտություններին կրտսեր եղբորը ծանոթացնում է միայն ընդհանուր գծերով: Զանգի Վանյա Բուհինի ուղեղը վերացական գիտությունները վատ էր ընկալում. Իվան Ալեքսեևիչը այն խառնվածքներից էր, որոնց մեջ տաղանդը, իր բառերով ասած՝ «աստծու ողորմածությամբ էր, ոչ թե մարդու կամոք, հնարանքով կամ ուսուցումով»...

Իր վաղ տարիների մասին Բուհինը հասուն տարիքում գրել է. «Ես մեծանում էի միայնակ: Յուրաքանչյուրը պատանի հասակում պատրաստվում է ինչ-որ մի բանի և որոշակի ժամկետում մտնում այս կամ այն կենցաղային գործունեության մեջ ընդհանուր մարդկային գործունեությանը համագործակցված: Իսկ ինչի՞ էի պատրաստվում ես և ինչի՞ մեջ մտա: Մեծանում էի առանց հասակակիցների, պատանի հասակում էլ հասակակից ընկերներ չունեի և չէի կարող ունենալ, պատանեկության սովորական ճանապարհն անցնել՝ գիմնազիա, համալսարան, ինձ վիճակված չէր: Բոլորն այդ տարիքում ինչ-որ բան, ինչ-որ տեղ սովորում են, և այնտեղ յուրաքանչյուրն իր միջավայրում հանդիպումներ են ունենում, մտերմություններ, իսկ ես ոչ մի տեղ չէի սովորում, ոչ մի միջավայր չունեի»:

Այդ միայնությունը, ինքն իրեն թողնված լինելը, հոգեկան պարապությունը Բուհինի մեջ սրում էին ի բնե նրան հատուկ հայեցողականությունը, շրջապատող աշխարհը, բնությունը, մարդկանց ընկալելու դիտողականությունը: Իսկ ինչ վերաբերում է «միջավայրին», ապա այն կար, միայն թե ոչ «իրենը», ոչ իր շրջանի մարդկանց:

«Հարկավոր էր ապրել գյուղում կլոր տարի, շփվել ժողովրդի հետ,— արդարացի կերպով գրում է Վ. Ն. Մուրոմցևա-Բուհինան,— հասկանալու համար ամեն բան այնպես, ինչպես հասկացել էր նա իր հազվագյուտ տաղանդով... Նա ամենավաղ մանկական հասակից բարեկամներ ուներ նախ երեխաների, հետո գյուղական երիտասարդների մեջ, որոնց հետ շատ ժամանակ էր անցկացնում՝ յուրայինի պես լինելով նրանց խրճիթներում, ամենայն նրբությամբ գիտեր գյուղական լեզուն: Աղքատանալը օգնեց նրան խորապես թափանցելու ռուս գյուղացու էության մեջ...»:

Բուհինի խաղաղ ու համեմատական միապաղաղ կյանքը կտրուկ կերպով փոխվում է նրա պատանեկության շրջանում: Աշխարհ տեսնելու, որքան կարելի է շատ իմանալու փափագը՝ գնալով մեծանում է նրա մեջ, և հետագայում նա սկսում է վշտանալ այն բանի

համար, թե որքան զուր ժամանակ է կորցրել վաղ տարիներին: Տասնինը տարեկանից նա «աշխարհ է դուրս գալիս» և այդ պահից սկսվում է նրա թափառական կյանքը:

Ասես մի անհանգստություն (որը Ն. Վ. Մուրոմցևա-Բուկինան իր գրքում սխալ կերպով կբացատրի որպես փախուստ միայնությունից) մղում է նրան դեպի ինստունկան—ինն հարյուրական թվականների անվերջանալի տեղաշարժերին: Օրյոլ-Խարկով-Ելեց-Խարկով-Սմոլենսկ-Մոսկվա և այլն: «Օրյովսկի վեստնիկ» թերթում աշխատանքը, բանաստեղծությունների առաջին գրքի լույս տեսնելը, հանդիպումը Լ. Ն. Տոլստոյի հետ. տոլստոյականությամբ հրապուրվելը, գրախանութ բացելու անհաջող փորձը. կյանքում ամենաուժեղ սերը, որ տևեց չորս տարի. նորից թափառումներ, ամուսնություն. որդու ծնվելը, երկու տարի անց բաժանումը. երեսուն տարեկանում առաջին ուղևորությունը արտասահման (Եվրոպա). բարեկամությունը Չեխովի հետ. Ն. Դ. Տելեշովի - գրական «չորեքշաբթիները». նորից ուղևորություն արտասահման. նորից հաջորդափոխություն՝ Մոսկվա-Օդեսա-Մոսկվա-գյուղ-Պետերբուրգ-Մոսկվա... որդու մահը. հանդիպումը ապագա կնոջ՝ Վերա Նիկոլաևնա Մուրոմցևայի հետ. ծանոթությունը, ապա բարեկամությունը Գորկու հետ. երրորդ, այնուհետև՝ չորրորդ ուղևորությունը արտասահման: (Սակայն գյուղը երբեք չէր մոռանում. տարեկան գոնե մեկ անգամ անպայման լինում էր իր հին վայրերում):

Բուկինը այդ ժամանակ իսկապես «և՛ ապրել է շտապում, և՛ զգալ»: Ի դեպ, իր մասին ամենից լավ գրել է նա ինքը.

Ես մարդ եմ. դատապարտված ինչպես աստված

Ապրելու թախիծը աշխարհի, թախիծը բոլոր ժամանակների:

Ինչ-որ մեկը մի ժամանակ ասել է, որ մարդու երջանկությունն են աշխատանքը, սերը և ճամփորդությունները: Բուկինն այդ ամենը ունեցել է երիտասարդ տարիներին և կրած դժբախտությունների ու հոգեկան ցնցումների հետ դրանք կազմել են նրա կյանքն ու կերտել նրա անհատականությունը:

Այսպես, 1910 թվականի մոտերքն արդեն սկսում է բացվել Բուկին-արձակագիրը: Մինչ այդ շրջանն ստեղծված պատմվածքներով (դրանք ըստ ծավալի կազմում են արդեն մի ամբողջ հատոր), ու առաջին հերթին իր երեսնամյակի գլուխգործոցով՝ «Անտոնովյան խնձորներով», նա կարծես հող նախապատրաստեց նշանավոր «Գյուղը» վիպակի համար:

«Գյուղը» գրելուց մի տարի հետո իր մի հարցազրույցի ժամանակ Բուկինը հայտարարեց, որ նրան հետաքրքրում են «ոչ թե սոսկ գյուղացիները, այլ ռուս մարդկանց հոգին ընդհանրապես»... «Ինձ հետաքրքրում է գլխավորապես ռուս մարդու հոգին, և խորապես, սլավոնի հոգեկան կառուցվածքի պատկերումը»:

«Գյուղը» գրելու շրջանում Բուկինը մտերմանում է Գորկու հետ և, պետք է կարծել, որ շատ ժամանակ է անցկացնում նրա հետ՝ զրուցելով ու վիճելով ռուս գյուղացու մասին, «հենց այդ Ռուսիայի և նրա պատմության» մասին: Ռուսական առաջին հեղափոխության պարտությունից հետո ռեակցիայի տարիներին երկու գրողին էլ տանջում է միևնույն հարցը. ի՞նչ է սպասվում Ռուսաստանին: Գորկին դրդում է Բուկինին գրելու գյուղի մասին, և Բուկինը հայտնում է նրան. «Վերադարձա նրան, ինչին Դուք խորհուրդ էիք տալիս վերադառնալ՝ գյուղի մասին վիպակին»: Ինքը Գորկին գրում է վիպակների ամբողջ մի շարք, որոնցից «Խոստովանությունը», որ գրվել էր «Գյուղից» ոչ շատ առաջ, Բուկինը շատ բարձր է գնահատում և համարում է «Մաքսիմ Գորկու վերջին տարիներին գրված ամենանշանակալի ստեղծագործությունը»: «Խոստովանությունը» մոտ է Բուկինին, քանի որ այդ ստեղծագործության և «Գյուղի» մեջ շատ ընդհանուր բաներ կան գաղափարական-բարոյական առումով: Եվ այնտեղ, և այստեղ պատկերված են երկու

արդարասերներ՝ ռուս ժողովրդի, նրա ճակատագրի համար տառապող: Եվ այնտեղ, և այստեղ երևում է հետամնաց, վայրի Ռուսաստանի սարսափելի պատկերը և յուրաքանչյուր տողն աղաղակում է. ինչո՞ւ է այդպես, մա՞րդն ինքն է արդյոք մեղավոր: Որտեղի՞ց է մարդու մեջ երկու եռթյուն՝ բարու և չարի, այդ հարցը տանջում է Բուկինին: Նույն արգանդից են դուրս եկել Կրասով եղբայրները, բայց ահա չգիտես ինչու մեկը դարձել է մռայլ գիշատիչ, իսկ մյուսը՝ հեզ, արդարասեր: «Ժողովրդի մեջ կան երկու տիպի մարդիկ,— գրում է Բուկինը մի քանի տարի անց:— Մի մասի մեջ գերակշռում է Ռուսաստանը, իսկ մյուսի մեջ՝ տրամադրությունների, բնույթի խիստ փոփոխականությունը, «անկայունությունը», ինչպես ասում էին հնում: Ժողովուրդն ինքն է ասել իր մասին. «Մեզնից, ինչպես փայտից, և մահակ են սարքում, և սրբապատկեր, նայած հանգամանքներին, նայած, թե ով է այդ փայտը մշակում...»:

Գորկու «Խոստովանության» հերոսը, ինչպես և Բուկինի Կուզմա Կրասովը, արդարություն և բարություն է որոնում աշխարհում, սակայն տեսնում է միայն, որ «դժվար են ապրում գյուղացիք, խմում են, կռվում, գողանում ու դողում ամեն բանից, բայց չէ որ... արդարության հասնելու ուժ չունեն, ժամանակ չունեն նրանք, ամեն մեկը պինդ շղթաներով գամված է իր հողին, իր տանը՝ քաղցի մատնվելու սարսափից. ի՞նչ պահանջես նրանցից»: «Տնքում է հոգիս...», «Ո՛ր է մարդը: Մարդ չեմ տեսնում...», «Ո՛րն է իմաստն այս ունայնության»:

Բուկինը տալիս է Կրասով եղբայրների անիմաստ և կործանված կյանքի և նրանց «այլանդակ» շրջապատի ժամանակագրությունը: Մեղավոր են, նրա կարծիքով, բոլորը, բոլորը միասին. և Ռուսաստանի դարավոր հետամնացությունը, և ռուսական անվերջանալի ծովությունը, վայրագության սովոր լինելը: «Սա ինչ հին ռուսական հիվանդություն է, այս տանջանքը, այս ձանձրույթը, այս շփացածությունը, հավերժական հույսը, որ կգա մի գորտ կախարդական մատանիով ու ամեն բան կանի քո փոխարեն. բավական է դուրս գաս կանգնես դռանը ու մատանին մի ձեռքից մյուսը տանես: Սա ներվային հիվանդության մի ձև է...» — գրում է նա ավելի ուշ: Ճշմարտասեր ինքնուս Կուզմա Կրասովը դառնում է հարբեցող, կործանվում է, իջնում հատակ սեփական գիտելիքների և փորձի ծանրության տակ, որ այդպես էլ չիմացավ ինչպես գործադրել («հարբեցողությունն ու անբանությունը նրան ծաղրի առարկա էին դարձրել»), նրա համար նույնքան նողկալի ու անիմաստ է ապրելը, ինչպես և Տիխոնի համար, որն, ընդհակառակն, երբեք չէր ձգտել ոչ ճշմարտության, ոչ գիտելիքների, ոչ բարության:

Այնտեղ, ուր Բուկինը գեղանկարչություն է անում, անողորմ նկարագրում, Գորկին խորհրդածում է: Նա պատճառների պատճառը որոնում է հենց մարդու մեջ: «Բարին և չարը մարդու մեջ են, — ասում է տիրացուն «Խոստովանության» վերջում,— ուզում եք բարին՝ բարի է լինում, ուզում եք չարը՝ չար է լինում՝ ձեզնից հենց ձեզ... ազատ գործում եք և չարություն, և բարություն»:

Իսկ Բուկինը բառերով ոչ մի եզրակացություն չի անում: Թվացյալ (եթե ոչ դիտավորյալ) անտարբերությամբ, այսպես ասած, թանձր ռեալիստական, հստակ, զուսպ, առանց մի ավելորդ բառի նկարագրում է նա, հոգ չտանելով պատմության ֆաբուլայի մասին, Ռուսաստանի խելահեղ, մռայլ, անմխիթար իրականությունը: Նրա պատումի ուժը բարոյախոսության, դատողությունների, ինչ-որ բան բացատրելու ջանքերի մեջ չէ, այլ յուրաքանչյուր բառի մեջ լսվող ցավի՝ գեղջկական Ռուսաստանի համար, որ հասել է նյութական և բարոյական անկման ծայրագույն աստիճանի:

Ռուսաստանյան կյանքի այլանդակությունների և ռուսական հոգու անհունության ուսումնասիրությունը, որ սկսվել էր «Գյուղում», շարունակվում է «Սուխոդոլ» վիպակում: 1911 թվականի սեպտեմբերին «Մոսկովսկայա վեստ» թերթի թղթակցի հետ ունեցած հարցազրույցի ժամանակ Բուկինը հայտարարում է, որ պետք է գրի ռուս այն ազնվականության մասին, որին ռուս գրականության մեջ ոչ ոք չի անդրադարձել. «Մենք գիտենք Տոլստոյի, Տուրգենևի ազնվականներին: Դրանցով չի կարելի դատել ողջ ռուս ազնվականության մասին, քանի որ և՛ Տուրգենևը, և՛ Տոլստոյը նկարագրում են վերին խավը, կուլտուրայի հազվագյուտ օազիսները: Ես կարծում եմ, որ Ռուսաստանի ազնվականության մեծ մասի կյանքը շատ ավելի պարզ էր և նրանց հոգին ավելի բնորոշ էր ռուս մարդուն, քան նկարագրում են Տոլստոյն ու Տուրգենևը»: «Ոչ մի ուրիշ երկրում ազնվականների և գյուղացիների կյանքն այնքան սերտորեն, այնքան մոտ կապված չէ, ինչպես մեզ մոտ»: Գրողն իր խնդիրը տեսնում է այն բանում, որ նկարագրի ռուս կալվածատիրոջը, ազնվականին սերտորեն «կապված գյուղացու հետ և շատ փոքր տարբերությամբ հոգեկան կառուցվածքի մեջ»:

Այդ «փոքր տարբերությունը հոգեկան կառուցվածքի մեջ» բացատրվում է, ինչպես ցույց է տալիս Բուկինը վիպակում, արյունակցական ու թաքուն կապերով, որ «անօրինական» կապում են ճորտ սպասավորներին տերերի հետ, չէ որ Սուխոդոլում բոլորն, ըստ էության, ազգականներ են:

Բուկինը խոսում է կալվածատիրական կյանքի անկման, այլասերման, վայրիացման, այդ կյանքի աննորմալության մասին: Սուխոդոլի կենցաղը՝ այլանդակ, վայրի, պարապ ու քայքայված, կարող էր մղել միայն խելահեղության, և վիպակի յուրաքանչյուր հերոս այս կամ այն չափով հոգեպես ոչ լիարժեք մարդ է: Բուկինն այդ միտքը չի պարտադրում, այն ինքն իրեն է ծագում: Ռուսաստանը հիվանդ է, հաստատում է հեղինակը, քանի որ այդպիսի մի Սուխոդոլը արդեն թարախապալար է: Գորկու ասելով, որը բարձր է գնահատել վիպակը, «Սուխոդոլը» — ռուսական ամենազարհուրելի գրքերից մեկն է»: Դա մի ստեղծագործություն է կործանիչ կրքերի՝ թաքուն և բացահայտ, անմեղ և արատավոր, երբեք բանականության չենթարկվող և միշտ կյանք կործանող ճորտ սպասուհի Նատալյայի, մորաքույր Տոնյայի «օրհորդի», «Պյոտր Կիրիլիչի պապի, աղայի, անօրինական զավակ Գերվասկայի: «Սերը Սուխոդոլում սովորական չէր: Սովորական չէր և ատելությունը», — սկսում է Բուկինը վեցերորդ գլուխը: «Սուխոդոլը» վիպակ է ֆանտաստիկ խառնվածքների և կրքերի, որոնք, սակայն, հորինված չեն, այլ վերցված են ընտանեկան ավանդություններից, այսինքն կենդանի կյանքից, այն ամենից, ինչ մնացել է Բուկինի հիշողության մեջ դեռ մանկության տարիներին լսած պատմություններից:

«Սուխոդոլում» գրողն սկսում է խոր և ուշադիր ուսումնասիրել սիրո պրոբլեմը: Այդ պրոբլեմը, որ հուզել, տանջել և ամեղձվածներ է ստեղծել նրա համար, պրոբլեմ մնալով նրա ամբողջ կյանքի ընթացքում, տարբեր շրջաններում տարբեր կերպ պետք է դրվի Բուկինի կողմից, և ամեն անգամ նա նոր մոտեցում պետք է գտնի այդ խնդրին («Միտյայի սերը», «Կոռնետ Ելագինի գործը», «Արսենի կյանքը», «Մուր ծառուղիներ» գիրքը): Բայց միշտ նա այն պետք է լուսաբանի ողբերգական լույսով. առանց ողբերգության, Բուկինի համոզմամբ, սեր չկա: «Սուխոդոլում» և դրանից հետո գրված պատմվածքներում («Լավ կյանք», «Իգնատ», «Սիրո քերականությունը», «Որդին», «Չանգի երազները») սերը հանդես է գալիս որպես մարդուն խորտակող կիրք, որ մեծ մասամբ կործանում է նրան: Այն հանդես է գալիս չիրականացած, անմարմին, ինչ-որ սուտ, որ խթան և սևեռուն գաղափար է դառնում հերոսի ողջ կյանքի համար: «Սուխոդոլում» այդպիսի սերը խելագուրկ է դարձնում մորաքույր Տոնյային, ինքն իր մեջ

ամփոփված Նատալյային դարձնում է «գեղեցիկ և խղճուկ հոգի», «Լավ կյանք» պատմվածքում ստիպում է ինքնասպանություն գործել վաճառականի որդուն, «Չանգի երազներում» անօգնական է դարձնում և բարոյալքում կապիտանին, մի ժամանակ ուժեղ, ինքնավստահ մարդուն:

«Գյուղը» և «Սուխոդոլը» սկիզբ դրեցին Բուկինի 10-ական թվականներին գրված մի շարք ուժեղագույն պատմվածքներին, որ «խիստ պատկերում էին,— ինչպես նա ասել է հետագայում,— ռուսական հոգին, նրա յուրօրինակ միահյուսումները, նրա լուսավոր և մոլթ, բայց գրեթե միշտ ողբերգական հիմքերը»: Ապրում են աշխարհում, օրինակ, այնպիսի սքանչելի, չարիք չիմացող արարածներ, ինչպես Կույր լիրիկ Ռոդիոնը, որ ուրախություն է պարգևում շուրջը բոլորին («Լիրիկ Ռոդիոնը»): Կամ էլ գեղեցիկ, բարի, ուժեղ մարդ՝ Չախար Վորոբյովը (նույնանուն պատմվածքում), որ անհեթեթ ձևով կործանվում է ծաղիկ հասակում այն բանի համար, որ իր ողջ կյանքը տանուկ տվեց հիմար գյուղացիներին: Մարդն ամեղծվածային է, համոզված է Բուկինը, նրա բնավորությունն անըմբռնելի: Որտեղի՞ց այդքան հերոսական, գերմարդկային ուժ վտիտ («որտեղի՞ց ուժ գտավ») թամբագործ Իլյային («Ճռիկ»), որ կարողանում է գիշերով մառախուղին ու սառնամանիքին տանել մահացող, իսկ հետո էլ մեռած որդուն (այն էլ, հավանաբար, ոչ հարազատ) և ինքը չի կործանվում այն պատճառով միայն, որ «մահը միտն էլ չի գալիս»: Այդ գիշերվա հիշողությունները դառնությամբ են լցնում ողջ նրա կյանքը, բայց հենց այդ էլ իմաստավորում է նրա կյանքը: Սակայն աշխարհում ապրում են և ուրիշ, խավար և բուրբ գյուղացիներ, ինչպես Ավդեյ Չաբոտան, որը շնորհակալ է ճակատագրից նրա համար, որ իր կյանքում ոչ մի իրադարձություն չի եղել: Ի՞նքն է արդյոք մեղավոր այն բանում, որ այդքան այլանդակ քարշ են գալիս իր օրերը, թե դրանում մեղավոր են ռուսաստանյան կյանքի այլանդակությունները, ասես հարց է տալիս գրողը:

Հետաքրքիր է, որ Բուկինին, ի բնե շատ պարզ և ներդաշնակ մարդուն, տասական թվականներին,— նրա ուժերի և տաղանդի ծաղկման, ի լուրմն նաև նրա, թերևս, ամենաերջանիկ շրջանում,— որ հենց այդ տարիներին նրան հետաքրքրում են մարդկանց և կյանքի անոմալիաները: Նրա սերը, փափագը և հետաքրքրությունը կյանքի նկատմամբ այնքան է, որ նա կարողանում է նայել և կյանքի ամենամոլթ անկյունները, որպեսզի արվեստագետի տիրական գրիչով,— չխարանի, ոչ,— բայց խստորեն մերժի վատը: Կենդանի նկարագրությամբ դասական է այդ առումով «Կյանքի թասը» պատմվածքը: Այստեղ տրված է ոչ մեծ պատմությունը խղճուկ գոյության՝ ջահելությունից մինչև ծերություն, ռուսական գավառական փոքրիկ քաղաքի մի քանի բնակիչների: Այդ գոյության քարշ տալն ընթանում էր առանց իրադարձությունների, միապաղաղ ու սովորական, քանի որ նրանց կրքերը ճնշված էին դեռ ջահել տարիքից: Սակայն նրանց գոյության հենց այդ առօրեականությունը, նրանց փոխհարաբերությունների առօրեականությունը (թշնամանք, սեր, վախ), գրողը տալիս է մղձավանջային խտացումով, ու ցույց տալիս, որ այդ առօրեականությունը ավելի սարսափելի է, քան որևէ կրքի դրսևորում: Սովորական, առօրեական է նույնիսկ ութսունամյա զարիուրելի իսկ Յաշան, որով վերջանում է պատմվածքը. այդ ավարտը տալիս է սարսափելի,— և խորհրդանշական,— պատկերը անհեթեթ իրականության:

«Իսկ Յաշան աշխատում էր իր մատուռում վաճառական Երշովի դամբարանի վրա: Բաց թողնելով այցելուներին, որ ամբողջ օրը լաց էին լինում նրա մոտ ու համբուրում նրա ձեռքերը, նա վառեց մոմի մնացորդն ու լուսավորեց իր կեղտոտ խալաթը, իր թասակը և ճերմակ խոզանով ծածկված դեմքը՝ ծակող, խորամանկ, շատ խորամանկ փոքրիկ

աչքերով: Նա աշխատում էր շատ դիպուկ. կանգնել էր պատի մոտ, թքում էր պատին ու թուքը սրբում սալորներով, իր հավատացյալ կանանց պարզևով»:

Բուժինի սուր դիտողականությունն ապշեցուցիչ է. ինչպես ապշեցուցիչ է նաև նրա կարողությունը տեսածն արտահայտելու տարողունակ, ճշգրիտ բառերով, որոնք միանալով դառնում են երգեցիկ, անթերի ռիթմով նախադասություններ. բուժինյան արձակը միշտ երաժշտական է, այն ձգտում է բանաստեղծականության: Այդ արտաքին հատկությունները, որ տարեցտարի ավելի ու ավելի էին դրսևորվում, պայմանավորված են ներքին պատճառներով: Զառասուն տարեկանում Բուժինն արդեն այնքան բան էր տեսել, ապրել, զգացել, կարդացել, որ դա բավական կլիներ մի քանի կյանքի համար: Նա չէր հոգնում նոր տպավորություններից, հանդիպումներից, գրքերից և ճամփորդություններից, նրան հրապուրում էին աշխարհի գեղեցկությունները, դարերի իմաստությունը, մարդկության մշակույթը: Այդ ակտիվ կյանքը՝ խառնվածքի բուն հայեցողականության հետ, մղում էին նրան ստեղծելու այդ շրջանի համար բնորոշ իր արձակը. անսյուժե, փիլիսոփայա-քնարական, միաժամանակ և շիկացած դրամատիկ:

Այդպիսին է «Եղբայրները» պատմվածքը, որի ոճն ու տրամադրությունները ներթափանցված են Ցեյլոն կատարած ճամփորդության տպավորություններով և իրենց վրա կրում են բուդդայական ուսմունքի մասին կարդացած գրքերի կնիքը:

«Ամեն ինչ անտառներում երգում էր ու փառաբանում կենաց-մահու աստված Մարային, «գոյության փափագի» աստծուն, ամեն ինչ սուրում էր, սլանում իրար ետևից, ցնծում կարճատև ուրախությամբ, ոչնչացնելով միմյանց...»:

Սակայն այս արևելյան հայեցողականության տակ թաքնված է լարված դրամատիզմ: Իրականությունը հասկացած ու զոջացող հարուստ մի անգլիացու բերնով Բուժինը խարանում է այս աշխարհի հզորներին՝ քաղաքակրթությամբ պատյանավորված գիշատիչներին, որոնք իրենց կյանքը տվել են կամ հարստանալուն, կամ թույլերին ստրկացնելուն, կամ էլ պարզապես ունայնության. «Մենք բոլորս՝ կոմերսանտներ, տեխնիկներ, զինվորականներ, քաղաքագետներ, գաղութարարներ, բոլորս՝ սեփական բնությունից ու դատարկությունից փրկվելու համար, թափառում ենք աշխարհով մեկ և ջանում հիանալ մեկ Շվեդարիայի լճերով և լեռներով, մեկ Իտալիայի աղքատությամբ... և ահա միայն այստեղ, հնագույն մարդկության երկրում, մեր այս կորցրած դրախտում, որ մենք կոչում ենք մեր գաղութներ և ագահորեն թալանում ենք, կեղտի, ժանտախտի, խոլերայի, տենդերի և գուճավոր մարդկանց մեջ, որոնց մենք դարձրել ենք անասուններ, միայն այստեղ ենք մենք որոշ չափով զգում կյանքը, մահը, աստվածությունը»:

«Սան-Ֆրանցիսկոյից ժամանած պարոնը» պատմվածքում գրողի հակաբուրժուական պաթոսը հասնում է իր գագաթնակետին. այդ պատմվածքի շատ էջեր մոտ են Լ. Տոլստոյի արձակին: Մանրագույն մանրամասնություններով, որ նրա տաղանդի մեջ այնքան բնականորեն միահյուսվում են զայրույթի և հուզականության հետ, Բուժինը գույներ չի խնայում պատկերելու արտաքին, իրերի աշխարհը, որում գոյություն ունի աշխարհի հզորների այդ հասարակությունը: Նա արհամարհանքով թվարկում է յուրաքանչյուր մանրունք, բոլոր այդ՝ իրերի աշխարհի ձեռքով սահմանված շոգենավային, հյուրանոցային և այլ շքեղությունների չափերը, որը և է իսկական կյանքը սույն «Սան-Ֆրանցիսկոյի պարոնների» հասկացողությամբ, որոնց մոտ, ի դեպ, այնքան բթացած են զգացմունքներն ու զգացողությունները, որ նրանց ոչ մի բան այլևս չի կարող հաճույք պատճառել: Իսկ իր պատմության հերոսին նա գրեթե չի արժանացնում արտաքին հատկանիշների, նրա անունը չի էլ ասում ընդհանրապես. նա արժանի չէ մարդ կոչվելու...

Գոյություն ունեցող իրավակարգի մերկացման ցասումով ամենաուժեղը «Պառավը» փոքրիկ պատմվածքն է: Ողջ տիպիկ «Բունինյանը» խտացված ու արտահայտված է այդ պատմվածքում բանաստեղծական այնպիսի ուժով ու կոքով, որ եթե Բունինը միայն այդ մի պատմվածքը գրած լիներ, նրան արդեն կարելի կլիներ դասել ռուս գրականության դասականների շարքը: Ընդամենը երեք տպագիր էջի վրա տրված է 1916 թվականի ձմռան Ռուսաստանը: Շարունակվում է արյունահեղ համաշխարհային պատերազմը, որ գերեզման է տարել անհայտ գավառական պառավի չորս որդիներին. գյուղերում քաղց է և աղքատություն. իսկ մայրաքաղաքում՝ «խրախճանքի ծով», արվեստի «վերնախավը» շոյում է անհոգ հասարակության լսողությունը, տեսողությունը, նյարդերը, փոքրիկ խուլ քաղաքում տարեց ուսուցիչը տքնում է անմիտ-վերացական տեսական ստեղծագործության վրա: Եվ միայն մի խեղճ, ամենքի համար անպետք պառավ, որ անմխիթար ողբում է իր ավելորդ կյանքը, դառնում է, իրենից անկախ, ամենաբնական արարածը այդ խելահեղ աշխարհում, ուր խախտված է ներդաշնակությունն ու ողջամտությունը: Որքան սրտաճմլիկ կարեկցանք կա պատմվածքում այդ անանուն պառավի հանդեպ, որ Բունինի համար ասես մարմնավորում է անդունդի եզրին գտնվող Ռուսաստանը:

«Պառավը» պատմվածքը գրված է 1916 թվականին, Բունինի համար շրջադարձային տարում, երբ ձգձգվող համաշխարհային պատերազմի համընդհանուր անմտության և հուսահատության պատճառով գրողն ընկնում է հոգեկան և ստեղծագործական ճգնաժամի մեջ, որ շարունակվում է մի քանի տարի: «Հոգեկան և մտավոր բթությունը, թուլությունը, գրական ամլությունը շարունակվում է... Սարսափելի հոգնել եմ... հավանաբար դրանում մեծ դեր է խաղացել պատերազմը՝ ինչպիսի մեծ հիասթափություն պատճառեց այն ինձ»,— գրում է նա 1916 թվականի հոկտեմբերին: Չանազան մտահոգումներ, հազվադեպ և պատահական, նա խորհում է, մտմտում, հետո թողնում: Նույնը շարունակվում է և 1917 թվականին: Փետրվարյան և ապա հոկտեմբերյան հեղափոխությունը Բունինն ընդունում է թշնամաբար և 1920 թվականի հունվարի 20-ին հեռանում է հայրենիքից:

Եվ ահա նա կամավոր արտաքսյալ է, որ մինչև կյանքի վերջն ապրում է Ֆրանսիայում: Տարագրության առաջին տարիներին նրա օրագրում գրառված շատ տողեր լի էին այնպիսի անհուսությամբ և թախիծով, որ թվում է դրանք գրել է մռայլ, մելամաղձոտ մեկը: Նրա մտքերը դարձած են ետ, դեպի թողած հայրենիքը, դեպի սեփական հոգեկան կործանման սպառնալիքի խավարը: «...Շարունակ հիշում էի ջախելությունս: Կարծես թաղում էի ես ողջ նախկին կյանքս, Ռուսաստանը...» Շարունակ մի միտք. «Ահա կործանվում եմ, ոչինչ չեմ անում»: Եվ հետո. «Իսկ ինչո՞ւ: Միևնույն է, մահը բոլոր սիրելիներիս և մեծ միայնությունը՝ և իմ մահն են»: «... տառապալից ցանկությունը գրելու և այն զգացումը, որ ոչինչ չեմ կարող, որ ես լիակատար սնանկ եմ, և որ ահա ուր որ է հայտնի կդառնա այդ գաղտնիքը» (գրառված է 1921—1922 թթ.): Խոր հուսահատությամբ է համակված Բունինի պատմվածքը նկարչի մասին, որն ամբողջ էությամբ կամենալով մարմնավորել իր կտավում աշխարհի աստվածային ներդաշնակությունը, իր կամքից անկախ ստեղծում է սարսափելի ավերածության ու կործանման պատկեր («Խելահեղ նկարիչը»): Իսկ դրանից հետո գրողն ստեղծում է հուսահատական և իր ճշմարտացիությամբ ու գեղարվեստական ուժով չափազանց վառ պատկերը՝ սեփական փախուստը արտասահման՝ Օդեսայից, Ֆրանսիական «Պատրաս», խղճով փոքրիկ նավով («Վերջ» պատմվածքը, 1921):

Ի դեպ, Բունինի տրամադրությունները հակասական են և փոփոխական: Նույն 1921 թվականին նա սկսում է (այդպես էլ անավարտ մնացած) «Իմ կյանքի գիրքը» քնարական

օրագիրը, որում մինչ այդ չտեսնված ուժով արտահայտված է բունհիյան ներքին վերաբերմունքը կյանքին և իր կոչմանը այդ կյանքում. դա յուրովի մի փրկության խարիսխ էր.

«Մեռել են մարդիկ, որ գրել են գրքեր իրենց երկրային գոյության մասին: Բոլոր ժամանակներում և դարերում, մանկուց մինչև գերեզման մեզնից յուրաքանչյուրին տանջում է մշտական ցանկությունը խոսելու իր մասին, — կարողանա խոսքով, թեկուզ փոքր իսկ պատկերես քո կյանքը,— և ահա առաջինը, որ ես պետք է ասեմ իմ կյանքի մասին, դա կյանքիս հետ անքակտելիորեն կապված և խոր խորհուրդով լի պահանջն է արտահայտելու և շարունակելու ինձ աշխարհում... Տարածության, ժամանակի, ձևի անհանգստությունը ամբողջ կյանքում հետապնդել է ինձ: Եվ ամբողջ կյանքում, գիտակցաբար և անգիտակցաբար, ես շարունակ հաղթահարում եմ դրանք: Բայց հուրախությո՞ւն արդյոք: Ե՛վ այո, և՛ ոչ: Ես տեսչում եմ ապրել և ապրում եմ ոչ միայն իմ ներկայով, այլև իմ անցյալ կյանքով և հազարավոր ուրիշների կյանքերով, ինձ ժամանակակից և անցյալի, ողջ պատմությամբ համայն մարդկության յուր բոլոր երկրներով: Ես անդադար փափագում եմ ձեռք բերել ուրիշինը և արմատավորել այն իմ մեջ: Բայց ինչո՞ւ: Նրա համա՞ր արդյոք, որ այդ ճամփին կործանեմ ինձ, իմ եսը, իմ ժամանակը, իմ տարածությունը, թե՞ նրա համար, որ ընդհակառակը, հաստատեմ ինձ՝ հարստանալով և ուժեղանալով ուրիշինով...»:

Ոչ մի իսկական տաղանդ չի կարող կործանվել հանգամանքների պատճառով, այլապես դա տաղանդ չէ: Շատ տարիներ անց, երեսնական թվականներին, Բունիսն ինքը ճիշտ, թեև կիսակատակի ձևով բացատրել է, թե ինչու օտարության մեջ չմարեց նրա գեղարվեստական ձիրքը. «Ահա ասում են, որ տարագրության մեջ շատ ծանր ես ապրում, որպեսզի կարելի լինի լավ գրել: Սակայն... չէ որ համաշխարհային գրականությունը, եթե խորամուխ լինես նրա պատմության մեջ, հենց տառապանքի, իդեալի ձգտումի անբավարարվածության արգասիք է: Իսկ որտե՞ղ ավելի շատ տառապանքներ, ավելի շատ չբավարարված ձգտումներ կարող են լինել, քան մեր տարագրական կենցաղում...»:

Թեև դանդաղ, բայց կամաց-կամաց նա սկսում է վերադառնալ ստեղծագործության: Եվ այն (խոսքը **գեղարվեստական** ստեղծագործության մասին է, ոչ թե հրապարակախոսական-հուշագրական հոդվածների, հաճախ չար և միամիտ) դառնում է ավելի բարի, ավելի մարդկային: «Չկան բաժանում և կորուստ, քանի դեռ կենդանի է հոգին իմ, իմ Սերը, Հիշողությունը: Սրտիս կենարար ջրի, սիրո, վշտի և քնքշության մաքուր հեղուկի մեջ եմ սուզում ես անցյալիս արմատներն ու ցողունները...» («Երիքոնի վարդը»): Այս բառերը դառնում են ասես գեղարվեստական նշանաբան: Հիմա Սերը և Հիշողությունը ավելի ու ավելի հաճախ են սկսում ոգեշնչել Բունիսին անցյալի վերստեղծման, որը նրան երևում է այլ, կերպարանափոխված ձևով, ինչպես, օրինակ, «Հնձվորներ» պատմվածքում: «Հրաշալիս այն էր, որ մենք բոլորս մեր հայրենիքի զավակներն էինք ու բոլորս միասին էինք, բոլորիս համար լավ էր, հանգիստ, իրար հանդեպ սիրով լի, առանց իսկ հասկանալու մեր զգացմունքները, քանի որ դրանք պետք էլ չէ հասկանալ, երբ կան: Ու նաև հրաշալի էր այն (որը չէինք գիտակցում այն ժամանակ), որ մեր այդ հայրենիքը, մեր բոլորիս տունը Ռուսաստանն էր, որ միայն նրա հոգին կարող էր երգել այնպես, ինչպես երգում էին հնձվորները նրանց յուրաքանչյուր հառաչանքին արծազանքող այդ կեչու անտառում»:

Սակայն հայրենիքը գրողի ստեղծագործական աչքին բնավ ոչ միշտ է վարդագույն լույսով երևում: Բունինը հիանալի հիշում է և սուր կերպով վերարտադրում այն, ինչ մի բառով

կարելի է կոչել «սովխոդոլչինա», ի դեմս մի անկման հասած կալվածատիրոջ՝ «փախստական ճորտ աղջկա» և «աղայի» որդու («Հարևանը»): Սոցիալ-պատմական առումով շատ հետաքրքիր է «Սլավա» պատմվածքը՝ ռուս խաբեբաների, խարդախների, գողերի մասին, որ ներկայանում էին որպես խենթ, աստծո գուշակներ, նույնիսկ սրբեր և հաղթական անցնում խուլ, խավար Ռուսաստանով, հիմարացնելով մարդկանց:

Քսանական թվականների առաջին կեսին Բուկինի ստեղծագործության մեջ, ինչպես երբեք, ուժեղ է երկու սկիզբների՝ լույսի և խավարի պայքարը, և հաղթում է առաջինը: Եթե «Արքայից Արքայի քաղաքը» (երկրի երեսից վերացած հին ցեյլոնյան մայրաքաղաքը), «Լափող կրակը» (գեղեցիկ կնոջ մահվան մասին, որից լույս մի բուռ մոխիր էր մնացել) պատմվածքներում Բուկինն ընկճված է անհուսության զգացումից, ապա «Քարաբզեզներ» փոքրիկ պատմվածքում բնական կենսահաստատումը հաղթանակում է նրա մեջ: Իսկ նույն, 1924 թվականին գրված «Իմաստության աստվածուհին» պատմվածքն ավարտվում է այսպես. «...մարդկության կյանքից, դարերից, սերունդներից երկրի վրա մնում է միայն բարձրը, բարին և գեղեցիկը, միայն այդ: Այն, ինչ չար է, ստոր ու ցածր, հիմար, ի վերջո հետք չի թողնում. այն չի մնում, չի երևում: Իսկ ի՞նչ է մնացել, ի՞նչը կա: Լավագույն գրքերի լավագույն էջերը, ավանդություններ պատվի, խղճի մասին, ինքնագոհության, ազնիվ քաջագործությունների մասին, հիանալի երգեր և արձաններ, մեծ և սուրբ գերեզմաններ, հունական տաճարները, գոթական եկեղեցիներ...»:

Հիմա Բուկինի ստեղծագործության մեջ ուժեղանում է բարության, մարդկանց հանդեպ սիրո մոտիվը, որ շատ ուժեղ է հնչում 1922 թվականին գրված «Հեռավորը» պատմվածքում: «Ըստ Էության մենք բոլորս, որ որոշակի ժամանակահատված ապրում ենք աշխարհում միասին ու միասին վայելում երկրային բոլոր ուրախությունները... պետք է միմյանց հանդեպ մեծագույն քնքշություն տածեինք, արտասվելու աստիճանի խանդաղատանք մտերմության, և ուղղակի պետք է աղաղակեինք սարսափից ու ցավից, երբ ճակատագիրը բաժանում է մեզ իրարից, ամեն անգամ լիովին հնարավորություն ունենալով մեր յուրաքանչյուր բաժանումը, նույնիսկ տասը րոպեանոց, դարձնելու հավիտենական»: «Կույրը» փոքրիկ Էսոյուդի մեջ (1924) նույն միտքն ավելի ուժեղ է հնչում: «Մենք բոլորս մեր Էությամբ բարի ենք: Ես քայլում եմ, շնչում, տեսնում, զգում ես կրում եմ իմ մեջ կյանքը, նրա լիակատարությունը և ուրախությունը: Ի՞նչ է նշանակում դա: Նշանակում է, որ ես ընկալում, ընդունում եմ, որ այն ամենը, ինչ շրջապատում է ինձ, գեղեցիկ, հաճելի, հարազատ է ինձ համար, սեր է հարուցում իմ մեջ: Կնշանակի կյանքը հենց սեր է, բարություն, և այդ սիրո, բարության պակասեցումը միշտ հավասար է կյանքի պակասեցման, արդեն մահ է» — բառեր, որ ասես դուրս գրված լինեն ուշ շրջանի Լ. Տոլստոյի էջերից:

Շատ ավելի «բուկինյան» են այն բառերը, որոնց արվեստագետը չի դավաճանի մինչև կյանքի վերջը:

«... Երանելի ժամերն անցնում են և... պետք է, անհրաժեշտ է (թե ինչու, աստված միայն գիտե) գոնե ինչ-որ կերպ և գոնե ինչ-որ բան պահպանել, այսինքն՝ հակադրել մահին («Մակագրություններ», 1924 թ. պատմվածք, ուր վիթխարի ուժով հնչում է արվեստի կենսահաստատ ուժի և անմահության մոտիվը):

Այդպիսի հակադրություն մահին Բուկինը համարում է սերը: Սկսած 20-ական թվականների կեսերից սիրո թեման տիրաբար մտնում է նրա ստեղծագործության մեջ,

որպեսզի հետագայում, 30-40-ական թվականների վերջերին, դառնա նրա ստեղծագործության գլխավոր թեման:

ԲուՆիկի քսանական թվականների ամենանշանակալի ստեղծագործությունը (և ամենամեծը «Սուխոդոլից» հետո) «Միտյայի սերը» վիպակն է: Այն նոր փուլ է հանդիսանում ոչ միայն ԲուՆիկի ստեղծագործության, այլև ողջ ռուս գրականության մեջ: Մինչ ԲուՆիկը այդպես սիրո մասին չէին գրում: ԲուՆիկյան նորարարությունն այն է, որ զգացմունքների պատկերման ժամանակակից համարձակությունը զուգակցվում է բառային արտահայտության դասական հստակությանն ու կատարելությանը: Դա վիպակը մոտեցնում է մեծ արձակ բանաստեղծության՝ սիրո երջանկությունն ու տառապանքը գովերգող: Միտյայի ապրումները, հագեցած ծայրահեղ հուզականությամբ, ընդունակ չափազանց սրությամբ, ցավով ու երանությամբ զգալու բնության ու իր սեփական զարթոնքը, տառապագին սիրելու թատրոնով հրապուրված և, իր զգացմունքներով ոչ արժանահավատ ու նրան լքած մի աղջկա, դրանք, անշուշտ, ինքնակենսագրական են: Միտյան հիշեցնում է Նաև Ելագինին («Կոռնետ Ելագինի գործը»): Այնտեղ էլ դերասանուհուն սիրահարված հերոսը տանջալից ու կործանարար սեր է զգում, «սեռի առաջին կանչը», երբ մարդու մեջ, բնության այդ մասնիկի մեջ, տեղի են ունենում համադետներ, որ ցնցում են նրա թույլ մարմնական հիմքը, երբ նրա զգացողությունների մեջ կերպարանափոխվում է ողջ աշխարհը, երբ ծայր աստիճանի սրված է նրա զգացողությունը շուրջը կատարվող ամեն ինչի հանդեպ, և այն ժամանակ՝ «ամեն ինչը սեր է, ամեն ինչը հոգի, ամեն ինչը տառապանք և ամեն ինչը անասելի ուրախություն»: Եվ այդ ամեն ինչը մարմնավորված է Կատյայի մեջ, Միտյայի երևակայությամբ ստեղծված Կատյայի, որը նման չէ իրական, մեղավոր, թույլ, թերևս, ողորմելի Կատյային: Բայց այդպիսին է սերը, ցույց է տալիս ԲուՆիկը, ստեղծել առասպել և տառապել այդ ստեղծածով: Միտյայի սերը երկատվում է երանության և տառապանքի, որովհետև Կատյան էլ երկատվում է «լուսավոր» Կատյայի, որ մոտենում է Միտյայի իդեալին, և բոլորովին այլ՝ անհավատարժան, փուչ, չսիրող (որ նրա մեջ ավելի շատ է): Այդպես ծնվում են խանդի տառապանքները, որ Միտյայի համար ոչ միայն բնական են, այլև անխուսափելի, քանի որ փոփոխական Կատյան շարունակ առիթ է տալիս դրա համար: Դաժան խանդ (ինչպես և մոլի սեր), գտնում է ԲուՆիկը, մեծ մասամբ առաջ են բերում հենց Կատյայի տիպի կանայք, ջահել մարմնավորումը «ամենատիպական կանացի եռության»: Նրանք միշտ թվում են «առեղծվածային», նրանց անհնարին է հասկանալ, ասենք, նրանք իրենք էլ իրենց չեն հասկանում. նրանք տատանվող են, անկայուն, անհասկանալի, անարժանահավատ: Նրանք տանջվում են իրենք և ստիպում տանջվել ուրիշներին: Իսկ խիստ նուրբ զգայնությամբ և չափազանց երևակայությամբ օժտված մարդիկ ձգտում են հենց այդպիսի կանանց, ինչպես Միտյան՝ Կատյային, կամ Կոռնետ Ելագինը՝ աղավաղված և հիստերիկ դերասանուհի Սոսնովսկայային, ինչպես «Չանգի երագներում» կապիտանը՝ մի կնոջ, որ իրեն չի սիրում: Եվ, վերջապես, «Միտյայի սիրո» մեջ ԲուՆիկը մինչև վերջ է հասցնում այն, ինչը հիրավի նորարարական է դարձնում նրա վիպակը այն ժամանակի համար: «Գրքերում և կյանքում,— գրում է Նա,— բոլորը կարծես մեկընդմիշտ պայմանավորվել են խոսել կամ ինչ-որ գրեթե անմարմին սիրո մասին, կամ էլ միայն այն մասին, ինչը կոչվում է կիրք, զգայականություն: Իսկ նրա (Միտյայի) սերը նման չէր ոչ մեկին, ոչ մյուսին...»: Միտյայի սերը իսկական էր, այն անխզելի էր «երկնայինից» և «երկրայինից», հոգուց և մարմնից:

«Միտյայի սերը» վիպակից սկսած, ԲուՆիկը գրում է սիրո մասին, որպես ճակատագրի բարձր պարզևի՝ և որքան գեղեցիկ է այդ պարզևը, այնքան կարճ է այն տևում:

«Արևահարություն» պատմվածքում Բուհինը զարգացնում է սիրո իր փիլիսոփայությունը: Եթե մինչ «Արևահարությունը» գրված պատմվածքներում սերը ողբերգական է այն պատճառով, որ անպատասխան է, մի կողմից է միայն, ապա այստեղ ողբերգականը հենց այն է, որ սերը փոխադարձ է և չափազանց գեղեցիկ, որպեսզի երկարեր: Հանդիպման ընդհատումը օրինաչափ է և անխուսափելի: Դեռ ավելին. երկու սիրահարներն էլ գիտեն, որ եթե երկարեր նրանց հանդիպումը, եթե նրանց կյանքերը միանային՝ հրաշքը, պայծառացումը, «արևահարությունը», որ դիպել էր նրանց, կվերանար:

Սերը, Բուհինի համոզմամբ, մի բարձր, լարված պահ է կեցության. գիշերվա փայլակի նման այն լուսավորում է մարդու ողջ կյանքը: Այս միտքը հատկապես կարևոր է Բուհինի համար, որ օժտված էր կյանքի սուր զգացողությամբ: Իր լավագույն պահերին, երբ նրան չէին տանջում մռայլ մտքերը, անհուսությունն ու հիվանդությունները, գրողն ստեղծում էր քնարափիլիսոփայական էսսեներ, արձակ բանաստեղծության նման մի բան: Նորից ու նորից նա իր ձևով վերամշակում էր հների իմաստությունը, ընտրելով այն ամենը, ինչ հաստատում էր կյանքը, խոսում կյանքի գեղեցկության և կախարդանքի մասին, մի կողմ նետելով այն, ինչ կոչում էր ժխտելու կյանքի ուրախությունն ու իմաստը: Այդպիսի պայծառ օրերին են գրվել «Գիշերը», «Ջրեր շատ» պատմվածքները, որոնք իսկական հիմն են գեղեցկությանը, ներդաշնակությանը և խորհրդավորությանը տիեզերքի՝ անսահման ժամանակի և տարածության մեջ, սրությամբ է տրված ինքդ քեզ այդ տիեզերքի մի չնչին մասնիկն զգալու տրամադրությունը: «Իմ կյանքը՝ թրթռուն և բերկրալից մասնակցությունն է հավերժականին և ժամանակավորին, մոտին ու հեռավորին, բոլոր դարերին և երկրներին, անցած ու ներկա ամեն ինչին այս երկրի վրա, ինձ համար այդքան սիրելի: Երկարացրու, աստված, ժամկետն իմ» («Ջրեր շատ»):

Ռուսների արտասահմանյան կյանքում Բուհինը մնաց միայնակ, տարագիրների խմբավորումներից դուրս, արհամարհում էր օրվա խնդիրների հետ կապված էժանազին իրարանցումը: «Տաղանդը՝ տաղանդ, բայց, այնուամենայնիվ, «սոճին իր անտառում է աղմկում», իսկ որտե՞ղ է իմ անտառը: Ո՞ւմ հետ և ո՞ւմ համար ես աղմկեմ»,— դառնությամբ գրել է նա: Կենդանի «դասական», նա այնքան մեկուսացած էր, այնքան ոչ ժամանակակից, այնքան «ոչ մոդայիկ», սակայն այդ ամենն արդեն չէին կարող ոչնչացնել նրա ինքնախորացած ստեղծագործությունը և նրա անսահման խստապահանջությունն իր տաղանդի հանդեպ:

1930 թվականից մի քանի տարի նա գրում է իր նշանավոր ինքնակենսագրական վեպը՝ «Արսենևի կյանքը»: Դա Բուհինի ամենանշանակալի ստեղծագործությունն է, նրա կյանքի հանրագումարը, գեղարվեստական ինքնաբացահայտումը, մարդկային և ստեղծագործական խոստովանությունը, Բուհինը չունի բառացիորեն ոչ մի ստեղծագործություն, որի թեմաները այս կամ այն կերպ արտահայտված չլինեն «Արսենևի կյանքում»: Իր գիրքն ստեղծելով մի քանի տարիների ընթացքում, Բուհինը նրանում արտահայտված յուրաքանչյուր փաստ լուսաբանում է իր ապրած կյանքի փորձով, իմաստավորում անցած ժամանակի բարձունքից: Իմաստավորում էր, բայց ոչ **վերաիմաստավորում**: Ընդհակառակը. հիշողությունը խտացված էր, խորացված, հստակացած: Արտաքին իրադարձությունները գրքում քիչ են, ինչպես քիչ են եղել դրանք Բուհինի մանկության և պատանեկության տարիներին, բայց ամեն մի արտաքին իրադարձություն դառնում էր նրա համար **ներքին**, առիթ դառնում շարունակ նոր ու նոր զարթոնքի նրա հոգու՝ գյուղացի տղայի մահը, ծնողների սնանկացումը, գիմնազիայից հեռանալը, «թափառումները»:

Ամենագլխավորում Բուհինը միշտ հարազատ էր մնում իրեն. տարիքի հետ կյանքի և հոգեկան փորձով սոսկ խորանում, լայնանում էր այն, ինչ կար նրա մեջ. երբեք և ոչ մի բանով նա չդավաճանեց իր Եռթյանը՝ բարոյական և գեղարվեստական: Եթե Արսենակի դատողություններն իր պատանեկության մասին համեմատենք այն բանի հետ, ինչ Բուհինն ինքը գրել է երիտասարդ տարիներին, ուղղակի զարմացնում է դրանց նմանությունը: (Միայն թե տարիքի հետ նրա մեջ սրվում է «աստվածային շնորհքը» — կյանքի նուրբ զգացողությունը, և այդ զգացումը նա պետք է արտահայտեր «Արսենակի կյանքում» անասելի ուժով): Գիրքն ավարտվում է հերոսի քսանամյակով, սակայն այդ քսանամյա ուղին պատմված և իմաստավորված է վաթսուն տարեկան արվեստագետի կողմից, ուստի հեղինակի անձնավորությունը բացված է ճշմարտացիությամբ և խորությամբ: Այդ է բուհինյան գրքի առանձնահատկությունը (նման ստեղծագործությունների, հատկապես Լ. Ն. Տոլստոյի եռերգության համեմատությամբ, որը առավելապես գեղարվեստական ինքնակենսագրություն է, պատմությունը հատկապես և միայն մանկության, դեռահասության և պատանեկության): Բուհինն իր գիրքը գրում էր «խտացնելով» իր սեփական մի քանի տարիները «արսենակյան» մի տարվա մեջ, և այդպիսով ստիպում էր հերոսին մանկության տարիներին զգալու և մտածելու այն, ինչ ինքն զգացել էր պատանեկության տարիներին, իսկ պատանեկության տարիներին ապրելու այն, ինչ ինքն ապրել էր հասուն ջահելության տարիներին: Հետևաբար լիովին իրավացի էր նրա վրդովմունքը նրանց հանդեպ, ովքեր «Արսենակի կյանքում» տեսնում էին միայն հեղինակի ինքնակենսագրությունը (թեև միաժամանակ նա Արսենակին որևէ ոչ իր միտքն ու բնավորության գիծ չի վերագրել):

Այն, որ Արսենակը «խտացրած» հեղինակն է, հատկապես զգացվում է գրքի հինգերորդ մասում, որ գրվել է մի փոքր ավելի ուշ: Դա ընդհանրապես ամենակարևոր մասն է, այստեղ ցույց է տրված Արսենակի տաղանդի հասունացումը, արվեստագետի ծնունդը, ցույց է տրված Արսենակի սիրո, Լիկայի հետ նրա սիրավեպի միջոցով:

Բուհինը նկարագրում է իր կյանքի ամենաուժեղ զգացմունքը՝ Վ. Վ. Պաշչենկոյի հանդեպ սերը (նա այդ չորսամյա սիրո շրջանում քսան-քսանչորս տարեկան էր): «Լիկայում» (այդպես էր սկզբում կոչվում հինգերորդ գիրքը) ժամանակը խտացված է ավելի ուժեղ, քան առաջին չորս գրքերում, Լիկայի հանդեպ սիրո կարճ ժամանակահատվածում Արսենակն ապրում է «բուհինյան» ամբողջ տասնհինգ տարիներ: Լիկայի և Արսենակի սիրավեպը ներկայանում է վերաստեղծման և կերպարանափոխության երկմիասնության մեջ: Վերաստեղծվում է Բուհինի պատանեկան ջերմ զգացմունքը, նման այն զգացմունքին, որ նա ուներ Պաշչենկոյին սիրահարվածության շրջանում, որի մասին գրել է 1890-1894 թվականների նամակներում: Արսենակի և Լիկայի փոխհարաբերությունները հինգերորդ գրքի առաջին գլուխներում՝ Արսենակի բուռն, փոխգիշման չգնացող սերը, նրա «անսահման, մշտական զգայունությունը» և Լիկայի փոփոխական վերաբերմունքը, որը վատ էր հասկանում նրան, անուշադիր էր և անտարբերությունից հանկարծ անցնում էր քնքշանքի անսպասելի դրսևորումների, ինքնակենսագրական են: Լիկան մոտ է կանանց այն տիպին, որ չեն կարողանում ու չեն սովորել սիրել, ինչպես ցույց էր տրված «Չանգի երագներում» և «Միտյայի սիրո» մեջ: Արսենակն ամբողջապես տարված է իր սիրով (ինչպես Միտյան՝ Կատյայի հանդեպ): Ապագա արվեստագետի տաղանդը առայժմ դեռ նշմարվում է նրա մեջ, այն դեռ չի ենթարկել իրեն անձնավորությանը: (Այդպես է եղել և Բուհինի հետ): Իսկ տասնմեկ գլխից սկսած վերաստեղծումն իր տեղը զիջում է կերպարանափոխությանը, այսինքն շատ ուժեղ «խտացմանը» Ալեքսեյ Արսենակի կյանքի ներքին իրադարձությունների: Մի քանի ամսով բաժանվելով Լիկայից, նա ներսուզվում է իր մեջ: Այդ ժամանակ նա ամենաշատը տասնութ տարեկան է: Բուհինը բաց է թողնում

իր կյանքի ծանր տարիների՝ կարիքի, օրավարձու և պատահական աշխատանքի հոգեկան ընկճվածության տարիների նկարագրությունը: Արսենը կարծես անցնում է այդ ամբողջ շրջանի վրայով և ամբողջապես տրվում «անիրականալիի» հետ պայքարին, այն բանին, որ ուզում է արտահայտել բառով, բայց չի կարողանում և այդ պայքարը ամենագլխավոր երջանկության համար, հանուն երջանկության՝ կարողանալու «կյանքի տվածից իր մեջ գոյացնելու գրելու հիրավի արժանի մի բան», մի կողմ է մղում նրա բոլոր մյուս խոհերը: Ու մի գեղեցիկ օր ստեղծագործելու երջանկությունը հանկարծ բացվում է Արսենի համար և հոգեկան տառապանքներն իրենց տեղը զիջում են հանգստության ու շատ պարզ վճռի. «առանց մի հավակնության, որոշ բաներ կարճ գրի առնել՝ զանազան մտքեր, զգացումներ, դիտողություններ»: Այդպես է ծնվում քնարական արվեստագետը, բանաստեղծը:

Ստեղծագործական զարթոնքի այդ շրջանում փոխվում է և Արսենի բնավորությունը. դառնում է ավելի առնական, պարզ, բարի և խաղաղ: Այդպես կերպարանափոխված է տեսնում Լիկան Արսենին բաժանումից հետո, և այստեղ փոխվում են նրանց դերերը: «Հիմա արդեն ես (ինչպես առաջ, Օրյուլում, Նա) ուզում էի լինել սիրված և սիրել, մնալով ազատ և ամեն ինչում առաջնայինը»: Դա տեղի է ունենում այն պատճառով, որ Նա ստեղծագործության մեջ գտնում է իր կյանքի նպատակն ու հենարանը. մնացյալը դառնում է երկրորդական այդ գլխավորի համեմատությամբ: Եվ շարունակելով սիրել Լիկային, միայն թե հիմա արդեն այլ կերպ, Արսենին արդեն միանգամայն հասուն Բունինի ոգով խոսում է այն մասին, որ իր և Լիկայի «մշտական անբաժանելիության» հնարավորությունը նրա մեջ «տարակուսանք» է հարուցում: Իսկ Լիկան, իր սիրուց բացի, ոչինչ չունի կյանքում: Բայց քանի որ Նա կոչված չէր արվեստագետի կյանքի ուղեկից լինելու, նրանց սերը աստիճանաբար սկսում է վերջանալ. Բունինը ցույց է տալիս նման վախճանի անխուսափելիությունը. Լիկան ի վերջո չի կարողանում Արսենին սիրել ոչ թե իր համար, այլ նրա՝ Արսենի համար, և հեռանում է, միայն շատ ավելի բանաստեղծական և իմաստավորված ձևով, քան եղել է իրականում: Այդպես մահանում է Արսենի սերը, միաժամանակ մնալով նրա մեջ հավերժորեն որպես Սեր եւ Հիշողություն, որպես չցամաքող աղբյուր ամեն մի ստեղծագործության համար:

1937 թվականին Բունինն ավարտեց իր տեսակի մեջ միակ փիլիսոփայական, հրապարակախոսական, բանաստեղծական և հուշագրական գիրքը՝ «Տոլստոյի ազատագրվելը»: Այդ գրքում արտահայտելով վաղուցվանից, դեռ Ռուսաստանից իր մեջ կրած գաղափարները մարդու գոյության, կյանքի և մահվան, կեցության իմաստի մասին անսահման ու խորհրդավոր աշխարհում: Ուշ շրջանի Տոլստոյին լավ հասկանալու համար Նա վերընթերցում էր Գ. Օլդենբերգի գիրքը Բուդայի մասին, Տոլստոյի օրագրերն ու նրա մերձավորների հիշողությունները: Խոսելով Տոլստոյին տանջող հեռանալու, կյանքից «ազատագրվելու» գաղափարի մասին, Բունինն ինքն իր համար հակառակ եզրակացության է հանգում: Կյանքի տենչը, բառի մեջ կեցության թանկ պահերը և դրա հանդեպ իր սեփական «զարմանքը» արտահայտելու ցանկությունը շարունակում են ապրել նրա մեջ: Եվ կյանքի մայրամուտին, օտարության մեջ, ծեր գրողին համակում է ոչ թե կյանքից «հեռանալու» միտքը, այլ, ընդհակառակն, այն միտքը, որ անհրաժեշտ է մահին հակադրել կյանքը: Բնորոշ է, որ մի ժամանակ Տոլստոյի նրան ասած մտքերից Նա հիշել է հենց այս. «Երջանկություն կյանքում չկա, կան միայն նրա փայլատակումները, զնահատեցեք դրանք, ապրեք դրանցով»:

Այդ «փայլատակումները», այդ երջանիկ պահերը Բունինը տեսնում է սիրո մեջ և արտահայտում դրանք «Մուժ ծառուղիներ» պատմվածքների գրքում:

«Մուլթ ծառուղիների» վրա նա աշխատել է 1937—1945 թվականներին, ֆաշիստների կողմից օկուպացված (այդ ժամանակահատվածի մեծ մասը) Ֆրանսիայում: Նա կտրականապես հրաժարվում է գերմանացիների հետ համագործակցելուց, Ամերիկա տեղափոխվելուց՝ Նույնպես, և մի քանի տարի իրեն «բանտարկում է»՝ Գրասսում, որտեղից գրեթե դուրս չի գալիս և տարեցտարի ապրում է ավելի ու ավելի կարիքի մեջ: Վախի զգացում նա չունեւր ամենևին, մի անգամ Նիցցայի մի սրճարանում, ուր գնում էր երբեմն, իր ողջությունը հարցնող մի ծանոթի հենց այնպես տրված հարցին՝ բարձր, հրապարակավ, ուշադրություն չդարձնելով շուրջը վիտացող մատնիչներին, պատասխանում է, որ ապրել չի կարող, երբ «այդ երկու գյադաները (Հիտլերը և Մուսոլինին) պատրաստվում են կառավարել աշխարհը:

«Մուլթ ծառուղիներ» գիրքը, աշխատանքն այդ գրքի վրա ապաստան էին գրողի համար, փրկություն շուրջը տիրող մղձավանջից: Այդ իմաստով կարելի է ասել, որ Բուևինը ծեր հասակում ավելի ուժեղ և արի գտնվեց, քան իր հասուն տարիներին, երբ թույլ տվեց, որ հոգեկան ընկճվածությունն իրեն հաղթահարի: Հիմա նա չի դադարեցնում իր ստեղծագործությունը, անձնագրի կերպով, ուժերը չխնայելով աշխատում է իր սիրելի գրքի վրա:

Բուևինյան «Մուլթ ծառուղիները» կարելի է սիրո հանրագիտարան կոչել: Հեղինակն ուսումնասիրում է մարդու ամենատարբեր մակարդակներն ու վիճակները, սկսած բարձր, բանաստեղծական ապրումներից («Ռուսյա», «Նատալի»), հակասական, քմահաճ ու տարօրինակ զգացումներից («Մոզա»), միանգամայն սովորական և պարզ հակումներից ու հույզերից («Սանամեր», «Սկիզբ») մինչև կրքի ամենացած, անասնական արտահայտությունները («Օրիորդ Կլարան», «Հյուրը»): Սակայն առաջին հերթին և գլխավորապես հեղինակին գրավում է իսկական մարդկային, երկրային սերը, «երկրի» և «երկնքի», մարմնականի և հոգեկանի միասնության ներդաշնակությունը: Այդպիսի սերը երջանկություն է, սակայն փայլատակման նման երջանկություն՝ բռնկվում է և անհետանում: Զանի որ սերը «Մուլթ ծառուղիներում» միշտ կարճատև է. ավելին՝ որքան ուժեղ ու կատարյալ է այն, այնքան շուտ է դատապարտված կտրվելու, լուսավորելով մարդու ողջ կյանքն ու հիշողությունը («Մուլթ ծառուղիներ», «Ստյոպա», «Ռուսյա», «Ծանոթ փողոցում», «Ցուրտ աշունը»): Տևական, մարդկանց միացնող «երջանիկ» սիրո հետ, երբ արդեն չկա ցավ և տառապանք, Բուևինը պարզապես գործ չունի. նա այդպիսի սիրո մասին երբեք չի գրում, դա արդեն բոլորովին այլ փոխհարաբերություններ են և չեն հետաքրքրում գրողին. «Թող լինի միայն այն, ինչ կա... Ավելի լավ արդեն չի լինի»,— ասում է երիտասարդ աղջիկը «Ճոճանակ» պատմվածքում, մերժելով ամուսնության միտքն իսկ մարդու հետ, որին սիրահարված է: «Տանյան» պատմվածքի հերոսը սարսափով է մտածում, թե ինչ պիտի անի, եթե ամուսնանա Տանյայի հետ, այն դեպքում, երբ իսկապես սիրում է միայն Նրան: Եվ երբ սիրահարները ձգտում են միացնել իրենց կյանքը, հենց վերջին պահին անսպասելի աղետ է պատահում, անսպասելի հանգամանքներ են առաջանում, ընդհուպ մինչև հերոսների մահը, որպեսզի «կանգ առնի պահը» զգացմունքների բարձրակետում: Այդ աղետները, այդ հանգամանքները «հորինելու» անհրաժեշտության պատճառով չէ՞ արդյոք, որ Բուևինյան ստեղծագործական երևակայությունը դառնում է ավելի հնարամիտ սյուժեներ ստեղծելու համար: Զանի որ «Մուլթ ծառուղիների» պատմվածքները ամենից սուր սյուժե ունեցող գործերն են Բուևինի ողջ ստեղծագործության մեջ: Ընդ որում, դրանց սուր ֆաբուլան այն աստիճանի ճշգրիտ է զուգակցվում հոգեբանորեն բացարձակ համոզիչ վիճակներին և խառնվածքներին, որ շատերը պնդում էին, իբր Բուևինը հիանալի հիշողությամբ նկատորագրել է դեպքեր իր սեփական կյանքից: (Այդ կարծիքը շատ վշտացնում էր Նրան):

Բուհինի գրարվեստի ուժն իսկապես անգերազանցելի է: Չափազանց անկեղծ և մանրամասն նա կարողանում է խոսել մարդկային ամենաինտիմ հարաբերությունների մասին, բայց միշտ այն սահմանում, երբ մեծ արվեստը մազաչափ անգամ չի իջնում թեկուզև մինչև նատուրալիզմի նմանվելու աստիճանի (ուստի ավելի ամոթալի էին Բուհինի հասցեին ուղղված մեղադրանքները՝ Էրոտիզմ, «սեքսի» ըմբռնվում և այլն): Նա իր պատմությունը տանում է «Միտյայի սիրո» և «Արևահարության» մեջ արած սեփական նորարարության ոգով: «Գենրիխ» պատմվածքում խոսելով այն զգացմունքների մասին, որ տղամարդու մեջ արթնացնում է կինը, որը հին արտահայտությամբ իրենից ներկայացնում է «մարդու գայթակղության որոգայթ», Բուհինն իր հերոսի բերանով (նույնպես գրողի) արտահայտում է սեփական վերաբերմունքը, Եսթետիկական և բարոյական, այն բանին, թե **ինչպես** պետք է գրել սիրո մասին. «Այդ «որոգայթը» հիրավի անբացատրելի, աստվածային և դիվային մի բան է, և երբ գրում եմ այդ մասին, ջանում արտահայտել այն, ինձ մեղադրում են անամոթության, ցածր հակումների մեջ... Ստոր հոգիներ: Լավ է ասված մի հին գրքում. «Գրողը նույնքան լիակատար իրավունք ունի սիրո և սիրահարների իր բառային պատկերման մեջ լինելու համարձակ, ինչպիսին բոլոր ժամանակներում տրվել է նման դեպքերում գեղանկարիչներին և քանդակագործներին, ստոր հոգիներն են միայն ստոր բան տեսնում նույնիսկ գեղեցիկի կամ այլանդակի մեջ»: Եվ իրոք, հենց «գեղանկարչի կամ քանդակագործի» նման է Բուհինը նկարում և քանդակում կնոջ մեջ մարմնավորված գեղեցկությունը, բնությունից նրան տրված նազանքով և ներդաշնակությամբ: «Կամարգ», «Յարյուր ռուպի» Էտյուդներն, օրինակ, ընդարձակ կանացի դիմանկարներ են իրենց ողջ նախնադարյան, վայրի գեղեցկությամբ, որպես ինքնին բնության մի երևույթ: «Մուժ ծառուղիներում» ընդհանրապես գլխավոր դերում կանայք են: Տղամարդկային բնավորություններ չկան, կան միայն նրանց զգացմունքներն ու ապրումները, չափազանց սուր արտահայտված: Իսկ կանացի կերպարները «Մուժ ծառուղիներում» ամբողջ մի շարք են կազմում. այստեղ և սիրեցյալին ցմահ նվիրված պարզ հոգիներ են՝ Ստյոպան և Տանյան (համանուն պատմվածքներում), և խեղդված արտասովոր, ժամանակակից ոգով համարձակ «դարի դուստրեր» («Մուզան», «Անտիգոնան»), շուտ հասունացած, սեփական «բնությունը» զսպել չկարողացող աղջիկներ («Չոյկան և Վալերիան», «Նատալին»), զարմանալի հոգեկան գեղեցկությամբ օժտված կանայք, ընդունակ անասելի երջանկություն պարգևելու և իրենք էլ ամբողջ կյանքում սիրելու («Ռուսյան», «Գենրիխը», «Նատալին»), պոռնիկներ՝ լկտի և գռեհիկ («Օրիորդ Կլարան»), միամիտ և երեխայական («Մադրիդ»), վերջապես ինքն իրեն չգտած, որոնող, տառապող և սքանչելի կին, որ կործանում է իր կյանքը («Մեծ պասի առաջին երկուշաբթին»), և շատ ուրիշներ, ու բոլորը՝ կենդանի, հավաստի և շատ ռուսական խառնվածքներ: Գործողությունն էլ գրեթե միշտ տեղի է ունենում հին Ռուսաստանում, իսկ եթե նույնիսկ ոչ այնտեղ («Փարիզում», «Վրեժ»), միևնույն է, հայրենիքը հերոսների սրտում է: «Ռուսաստանը, մեր ռուսական Էությունը մենք տարել ենք մեզ հետ, և ուր էլ լինենք, չենք կարող այն չզգալ»,— ասում էր Բուհինը:

1945 թվականի մայիսին Բուհինները Գրասից վերադառնում են Փարիզ, ուր 1934 թվականից բնակարան էին վարձում: Փարիզում Բուհինի առողջությունն սկսում է վատանալ. մի քանի անգամ թոքաբորբ է տանում, թոքախտի վտանգ է սպառնում, բուժման համար միջոցներ չունենին: 1947 թվականին նա գրում է, որ դժվարությամբ է անկողնուց մինչև գրասեղան հասնում, որ բժիշկները, սնունդը, դեղերը հիմնահատակ սնանկացրին իրեն: 1948 թվականին գրում է. «... 79-րդ տարուս մեջ եմ, և այնքան աղքատ եմ, որ չգիտեմ ինչպես պետք է գոյությունս պահպանեմ»: Գոյությունը պահպանել հաճախ ստիպված էր լինում այն միջոցներով, որ բարեգործության կարգով

Նրա համար հավաքում էին հարուստ մարդկանցից, մասնավորապես, 1948 թվականին, Բուկինին օգնեց հայտնի դիրիժոր Կուսկիցկին:

Ծերությունն ու կարիքը քայքայում էին գրողի վերջին ուժերը. մահվանից ոչ շատ առաջ Նրան այցելած լրագրողը հիշում է. «Բուկինը հիվանդ էր, չոր, տանջալից, կուրծքը պատռող հազ ուներ: Սենյակում մի լամպ էր վառվում: Անկյունում, ցածրիկ երկաթե մահճակալին, զինվորական ծածկոցի տակ կիսապառկած, կիսանստած էր Բուկինը... Նա մի տեսակ չորացել էր, փոքրացել, այտերը փոս էին ընկել ու ծածկվել ճերմակ կոշտ մազերով... Եվ խոր կնճիռներով ակոսված այդ տառապած դեմքին տեսա ուշադիր ինձ նայող մեծ աչքեր: Ոյու ժակ Օֆֆենբախի վրա գտնվող բնակարանը հին էր, երբեք աչքի չէր ընկել իր մաքրությամբ, ու այն չէին վերանորոգել, թերևս, անհիշելի ժամանակներից: Սակայն հիմա այդ բնակարանը կատարելապես ամայացած էր... Առաջին անգամ Իվան Ալեքսեևիչը ոչ մի անգամ չժպտաց, ոչ մեկին չնմանակեց, ոչ մեկի հասցեին չկատակեց: Ասենք, դրա սիրտը չուներ էլ: Եվ սակայն, շատ շուտով համոզվեցի, որ չնայած սարսափելի ֆիզիկական թուլությանը, գրեթե լրիվ անօգնականությանը, Նրա գլուխը հիանալի աշխատում էր, մտքերը թարմ էին, սուր, չար...»:

Բուկինն իսկապես ծեր հասակում էլ պահպանել էր մտքի պայծառությունը ու նաև կենդանի հետաքրքրությունն այն ամենի հանդեպ, ինչ կատարվում էր հայրենիքում: 1947 թվականին նա կարդացել էր Տվարդովսկու «Վասիլի Տյորկինը» պոեմը և հիացել. նույն տարին «Բացառիկ ուրախություն» էր ապրել Պաուստովսկու «Բրագինկայի պանդոկը» պատմվածքից: Եվ մինչև իր կյանքի վերջը չդադարեց աշխատելուց. կազմեց «Գարնանը, Հրեաստանում»: «Երիզնի վարդը» (1953), «Ոլորուն ականջներ» (յույս է տեսել Բուկինի մահից հետո, 1954 թ.) ժողովածուները, խմբագրական ուղղումներ էր անում իր երկերի ժողովածուում «Պետրոպոլիսի» հրատարակությամբ և «Արսենևի կյանքում», որ լույս տեսավ 1952 թվականին: Իսկ գլխավորը, մինչև կյանքի վերջին օրերը աշխատում էր Չեխովի մասին գրքի վրա: Չեխովի մասին նա «վերընթերցել էր այդ ժամանակ այն ամենը, ինչ հնարավոր էր գտնել Փարիզում... Անքուն գիշերներին Իվան Ալեքսեևիչը,— կյանքի վերջին տարում նա գրեթե զրկվել էր քնից,— նշումներ էր կատարում թղթի կտորների, երբեմն նույնիսկ ծխախոտի տուփերի վրա, հիշում էր Չեխովի հետ զրույցները»— գրում է Վ. Ն. Մուրոմցևա-Բուկինան: Իր մահվան օրը, 1953 թվականի նոյեմբերի 8-ին, Բուկինը դեռ աշխատում էր այդ վերջին, այդպես էլ անավարտ մնացած գրքի վրա, Վերա Նիկոլանևան բարձրաձայն կարդում էր Չեխովի նամակները, Իվան Ալեքսեևիչը ասում էր Նրան, թե ինչն է պետք նշել: Այսպիսով, Բուկինը մահացավ բառիս բուն իմաստով իր գրողական պարտականությունը կատարելիս:

«Ռուսական լեզվի պահապանը», ինչպես շատ դիպուկ անվանել է Նրան Ի. Ա. Կոզլովսկին, Ի. Ա. Բուկինը իր ողջ երկար կյանքում ծառայել է ռուս գրականությանը, որի «ամենաթանկ գծերն» է համարել խորությունը, լրջությունը, պարզությունը, անմիջականությունը, ազնվությունը, շիտակությունը: Բոլոր այդ գծերով լիովին հագեցած է և Նրա ստեղծագործությունը, որ ներհոսել է ռուս մեծ գրականության մեջ: